Հաստատված է 2023 թվականի

օգոստոսի 31-ին Մ/Խ թիվ մեկ նիստով

տնօրեն Մ.Համբարձումյան

# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

## 2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

| Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|
| 2 | 3 | 4 |
| Հրավիրել մանկավարժական խորհրդի նիստ, ծանոթացնել էլեկտրոնային մատյանների վարման կանոնակարգը: | Օգոստոս | Տնօրեն |
| Հրավիրել կառավարման խորհրդի նիստ (հեռավար) | Օգոստոս | Տնօրեն |
| Կատարել վերջնական դասաբաշխում | Օգոստոս | Տնօրեն |
| Կոմպլեկտավորել դասարանները | Օգոստոս | Տնօրեն |
| Ուսումնասիրել աշակերտների շարժը և կազմել հաշվետվություն | Օգոստոս | Տնօրեն |
| Կազմել դասացուցակ և ներկայացնել հաստատման | Օգոստոս-Սեպտեմբեր | Տնօրեն |
| Քննարկել և հաստատել մեթոդմիավորումների տարեկան աշխատանքային պլանները: | Օգոստոս-Սեպտեմբեր | Տնօրեն, մ/մ նախագահներ |
| Քննարկել և հաստատել առարկայական թեմատիկ պլանավորումները: | Օգոստոս-Սեպտեմբեր | Տնօրեն, մ/մ նախագահներ |
| Քննարկել և հաստատել, հատուկ մանկավարժների,ուսուցչի օգնականի տարեկան աշխատանքային պլանները: | Օգոստոս-Սեպտեմբեր | Տնօրեն |
| Սահմանված ժամանակացույցով կատարել դասագրքերի բաշխում՝ համաձայն ընդունված կարգի: | Օգոստոս | Գրադարանավար |

# ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՍԱԳՈՐԾՈՒՄ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Անցկացնել 6 տարեկան երեխաների հաշվառում դպրոցի սպասարկման տարածքում: | Մայիս-օգոստոս | Տնօրեն, դասվարներ |
| 2 | Պարզել ուսուման մեջ աշակերտների հետ մնալու պատճառները, մշակել կոնկրետ միջոցառումներ՝ անհատական աշխատանք կատարելու նպատակով: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, մ/մ նախագահներ |
| 3 | Հնարավորության սահմաններում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ապահովել դասագրքերով և գրենական պիտույքներով: | սեպտեմբեր | Տնօրեն |
| 4 | Սահմանել վերահսկողություն պարբերաբար ուշացումների և անհարգելի բացակայությունների նկատմամբ, ժամանակին կանխել դրանք, անհրաժեշտության դեպքում առաջնորդվել օրենքով սահմանված կարգով: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, մ/մ նախագահներ |
| 5 | Մշտապես կապի մեջ լինել գյուղապետարանի, սոցիալական աջակցությունների տարածքային կենտրոնների հետ՝ սոցիալական խնդիրներ ունեցող աշակերտներին օգնելու նպատակով: | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն, ուսուցչի օգնականներ, դաստիարակներ |
| 6 | Աշխատանք տանել 5-9-րդ դասարանների դժվար դաստիարակվող երեխաների և նրանց ծնողների հետ: | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն |
| 7 | Պարտադիր ուսուցման գործընթացի իրականացմանը մասնակից դարձնել ծնողներին, ծնողական խորհուրդին: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն |
| 8 | Դժվար առաջադիմող և երկտարեցի աշակերտներին, ըստ նրանց ընդունակությունների ընդգրկել արտադպրոցական խմբակներում, ակումբներում, սեկցիաներում | Ուստարվա ընթացքում | |

| | | | |
|---|---|---|---|
| 9 | Երեխաներին ծանոթացնել , դպրոցի ներքին կարգապահական կանոններն, գործող ռեժիմին, ինչպես նաև իրենց իրավունքներին ու պարտականություններին, նաև համաձարակային պայմաններում:Ստեղծել ջերմ մթնոլորտ ուսումնական գործընթացը բարեհաջող սկսելու համար: | Սեպտեմբեր | Տնօրեն |

## ԲԱԺԻՆ II
## ԱՇԽԱՏԱՆՔ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ , ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Գրադարանում տարածել մեթոդական բաժին,այն հարստացնել մեթոդական գրականությամբ, ինչպես նաև առարկայական ծրագրերով և չափորոշիչներով: | Օգոստոս | Տնօրեն, գրադարանավար |
| 2 | Տարեսկզբին հրավիրել առարկայական մասնախմբի նախագահների խորհրդակցություն, պլանավորել նրանց աշխատանքային տարեկան գործունեությունը՝ հանրակրթական հաստատությունում ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման և առարկայի դասավանդման արդյունավետության բարձրացման ուղղությամբ : Հանձնարարել Ա.առարկայական մասնախմբերում քննարկել, ամբողջական տեսքի բերել ուստարվա առարկայական պլանը և ներկայացնել հաստատման<br>Բ.ուսումնական պլանի բաղադրիչով և նախասիրականով սահմանված ժամանակի տնօրինման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում<br>Գ. Ստուգել ուսուցիչների թեմատիկ պլանները, տալ համապատասխան հանձնարարություններ: Թեմատիկ պլաններում առարկայի չափորոշչային պահանջների համապատասխանության և պլանի լիարժեքության մասին ներկայացնել հաշվետվություն (գրավոր) տնօրենությանը | Օգոստոս<br>Սեպտեմբեր 4-15 | Տնօրեն |

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Անցկացնել առարկայական մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն: Լսել մասնախմբերի նախագահների հաշվետվությունները կատարած աշխատանքների մասին, քննարկել, տալ համապատասխան հանձնարարություններ, անհրաժեշտության դեպքում աշխատանքային պլաններում կատարել փոփոխություններ: Քննարկել մեթոդամանկավարժական հրատապ հիմնահարցեր: | Ամիսը մեկ անգամ | Տնօրեն |
| 4 | Կատարել դասալսումներ՝ միջին հաշվով շաբաթական տնօրեն ՝ 4-5, առարկայական մասնախմբի նախագահ՝ 2-3: Դասալսումներ կատարել նպատակային և նույն օրը քննարկել ուսուցչի հետ՝ դասալսման տետրում գրելով անհրաժեշտ դիտողություններ, հանձնարարություններ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, մասնախմբերի նախագահներ, դասղեկներ |
| 5 | Ուշադրության կենտրոնում պահել սկսնակ ուսուցիչներին: Նրանց համար կազմակերպել մեթոդամանկավարժական օգնություն | Ուստարվա ընթացքում մասնախմբերի նախագահներ, դասղեկներ | Տնօրենություն |
| 6 | Բոլոր դասարաններում աշակերտների գիտելիքները ստուգել նաև կիսամյակի ընթացքում առնվազն 1 անգամ բոլոր առարկաներից անցկացնելով տնօրենության կողմից տրվող գրավոր աշխատանքների միջոցով: | Կիսամյակը մեկ անգամ | Տնօրենություն, ուսուցիչներ |
| 7 | Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ, սեմինարներ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն |
| 8 | Պահանջել , որպեսզի յուրաքանչյուր ուսուցիչ ուսումնական տարվա ընթացքում հանդես գա առնվազն մեկ մեթոդական –մանկավարժական, առարկայական բնույթի զեկուցումով:Այն քննարկել առարկայական մասնախմբում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, մասնախմբերի նախագահներ |
| 9 | Կազմակերպել կոնսուլտացիոն պարապմունքներ՝քննություններին նախապատրաստելու համար: | Մայիս | Տնօրեն, տնօրենի տեղակալ ուսումնական գծով |
| 10 | Ժամանակին կազմել և հաստատել քննական հանձնաժողովները, փակցնել քննական կարգացուցակը քննությունները սկսվելուց առնվազն տաս օր առաջ: | Մայիս | Տնօրեն |
| 11 | Ամփոփել քննության արդյունքները: | Հունիս | Տնօրեն |
| 12 | Ուսուցիչներին հաղորդակից դարձնել գիտության և մանկավարժության նորագույն նվաճումներին: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն |
| 13 | Ուսուցիչներին ժամանակին ծանոթացնել ՀՀ | Ուստարվա | |

| | | | |
|---|---|---|---|
| | կառավարության որոշումներին ՀՀ ԿԳՆ հրամաններին, հրահանգներին և այլ նորմատիվ փաստաթղթերին: | ընթացքում | Տնօրեն |
| 14 | Յուրաքանչյուր առարկայական մասնախմբից ուսումնասիրել 2-3 ուսուցչի աշխատանքային գործունեությունը: Արդյունքները քննարկել տնօրենության նիստում կամ առարկայական մասնախմբում՝ տալով համապատասխան գնահատական : Հասնել այն բանին, որ մանկավարժական ողջ կոլեկտիվը իր գործունեությամբ բավարարի ընդհանրական պահանջները: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն |

## ԲԱԺԻՆ III

## ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

| № | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Պատասխանատու |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով և երաշխավորված մեթոդական ուղեցույցներով: | Օգոստոս | Տնօրեն,առարկայական մասնախմբեր |
| 2 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով ուսուցումը կազմակերպել հնարավորության դեպքում կաբինետային համակարգով, հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան, օգտագործել առկա տեխնիկական միջոցների ողջ հզորությունը: | Տարվա ընթացքում | Տնօրեն |
| 3 | Աշխատանք տանել կաբինետները և դասարանները անհրաժեշտ նյութերով ու սարքավորումներով կահավորելու ուղղությամբ: | Օգոստոս , սեպտեմբեր | Տնօրեն |
| 4 | Նոր ուսուցիչների համար կազմակերպել համակարգչային դասընթացներ, նրանց սովորեցնել համակարգչով աշխատել: | Տարվա ընթացքում | Տնօրեն, ինֆորմատիկայի ուսուցիչ, օպերատոր |
| 5 | Սովորողների կրթական որակը բարձրացնելու նպատակով կատարել նպատակային դասալսումներ, արդյունքները քննարկել, առաջարկություններն ու դիտողությունները գրանցել նաև ուսուցիչների աշխատանքային գործունեությունը բնութագրող «Դիտողությունների և առաջարկությունների» բաժնում: | Տարվա ընթացքում | Տնօրեն, առարկայական մասնախմբեր |
| 6 | Կատարել առարկայական ուսումնասիրություններ. Արդյունքները քննարկել առարկայական մասնախմբերի | | |

| | | | |
|---|---|---|---|
| | նիստերում, տնօրինության խորհրդակցություններում, մանկավարժական խորհրդում կամ կոլեկտիվի ժողովում: Ուսումնասիրել՝<br>ա) առարկայի դրվածքը 1-9-րդ դասարաններում<br>-հայոց լեզու և գրականություն<br>-ֆիզիկա<br>-աշխարհագրություն<br>-մայրենի<br>-մաթեմատիկա<br>-հայոց պատմություն<br>բ)ՏՀՏ-ի օգտագործում դասերին<br>գ) նոր ծրագրերի և չափորոշչային պահանջների իրականացում<br>-կրտսեր դպրոց<br>-միջին դպրոց | Ուստարվա ընթացքում | Տնօրեն մասնախմբի նախագահներ |
| 7 | Կազմակերպել առարկայական շաբաթներ , միամսյակներ:<br>Առարկայական միամսյակների<br>ա) կազմակերպել ցերեկույթներ, բաց դասեր<br>բ)լույս ընծայել պատի թերթեր<br>գ)հրավիրել մասնագետներ տարբեր ուսումնական հաստատություններից | Ուստարվա ընթացքում | տնօրեն, մասնախմբի նախագահներ ուսուցիչներ |
| 8 | Ապահովել աշակերտների մասնակցությունը առարկայական օլիմպիադաներին, մարզային և հանրապետական ուսումնական, սպորտային, մշակութային միջոցառումներին: | Ուստարվա ընթացքում | Տնօրինություն |
| 9 | Անցկացնել «Գիտակների մրցույթ»: | Հոկտեմբեր, մարտ | խմբակավարներ |
| 10 | Հայտնաբերել օժտված երեխաներին, տալ առարկայական խոր և կայուն գիտելիքներ, մղել նրանց ստեղծագործական, որոնողական աշխատանքի: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, մասնախմբի նախագահներ, ուսուցիչներ |
| 11 | ***<u>ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</u>***<br>Օգնել դասղեկներին կազմել դաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանը և ներկայացնել հաստատման: | Սեպտեմբեր | Տնօրեն |
| ա/ | Դասղեկներից պահանջել՝ աշխատանքային պլանի հիմքում ամրագրել հետևյալ դրույթները. Ստեղծել դասարանական ամուր կոլեկտիվ: Աշակերտներին տալ հայեցի դաստիարակություն, նրանց մեջ արթնացնել ազգային արժանապատվություն և հպարտություն: Դաստիարակության հիմքում դնել հանրակրթական դպրոցի շրջանավարտի նկարագրի պահանջները: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, դասվարներ |
| բ/ | Շաբաթը մեկ անգամ անցկացնել դասղեկի ժամ | Ուստարվա | Դասղեկներ, |

| | | | |
|---|---|---|---|
| | և այն ծառայեցնել երեխաների բազմակողմանի դաստիարակության և մանկական առողջ կոլեկտիվի ձևավորման նպատակին: | ընթացքում | դասվարներ |
| գ/ | Հետևողական աշխատանքի միջոցով հնարավորինս նվազեցնել անհարգելի բացակայությունները: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն |
| դ/ | Կիսամյակը 2-3 անգամ հրավիրել դասարանական ծնողական ժողով: Ամուր հիմքերի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը: Ծնողների համար կարդալ մանկավարժական թեմաներով զեկուցումներ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ, դասվարներ |
| ե/ | Յուրաքնաչյուր դասարանում ստեղծել ծնողխորհուրդ (բաղկացած 3-5 հոգուց), ապահովել ծնողխորհուրդի մասնակցությունը ուսումնական գործընթացի կազմակերպմանը: | Ուստարվա ընթացքում | դասղեկներ, դասվարներ |
| զ/ | Սահմանել բաց դռների օր, ապահովել ծնող-ուսուցիչ կապը: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ |
| 14 ա/ | ***ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*** Հետևողական աշխատանք տանել աշակերտների գեղագիտական դաստիարակության գործի բարելավման ուղղությամբ: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, դասղեկներ |
| բ/ | Սովորողների օգնությամբ ձևավորել շենքի միջանցքներն ու կաբինետները, կազմակերպել գեղարվեստական օլիմպիադաներ, հաշվետու համերգներ: | Ուստարվա ընթացքում | դասղեկներ, դասվարներ |
| գ/ | Ծաղիկներով պատել դասասենյակներն ու միջանցքները, ստեղծել վահանակներ: | Ուստարվա ընթացքում | դասղեկներ, դասվարներ |
| 15 ա/ | ***ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ*** Կանոնավոր կերպով անցկացնել առավոտյան լիցքային վարժությունները, առողջարարական դասամիջոցները և մարմնամարզական րոպեները: | Ուստարվա ընթացքում | ուսուցիչներ |
| բ/ | Ուսումնական տարվա ընթացքում կազմակերպել առողջության օր՝ բժիշկների ստուգայցեր: | Ուստարվա ընթացքում | Տնօրենություն |
| գ/ | Կազմակերպել սպորտլանդիաներ կրտսեր և միջին դպրոցում: | Ուստարվա ընթացքում | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ |
| դ/ | Պարբերաբար կազմակերպել աշակերտների կողմից մարզական նորմատիվների հանձնում: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն,Ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ |
| ե/ | Անցկացնել միջդասարանական, միջդպրոցական մրցումներ: Այն կազմակերպել բարձր մակարդակով, նախապես իրազեկ դարձնել դասղեկներին և աշակերտներին: | Հոկտեմբեր, մայիս | Ֆիզկուլտուրայի ուսուցիչ, դասղեկներ |
| զ/ | Խստորեն վերահսկել անվտանգության և սանիտարական կանոնների պահպանմանը: | Մշտապես | Տնօրեն, տնտեսվար |
| է/ | Պարբերաբար հետևել ուսումնական գործընթացի հիգիենային, պահպանել դասացուցակների կազման և տնային | Մշտապես | Տնօրեն |

| | | | |
|---|---|---|---|
| | աշխատանքների ժամաբաշխման անհրաժեշտ պահանջները: | | |
| ը/ | Ուսումնական տարվա սկզբին և վերջում մանկավարժական խորհրդի նիստերում լսել տարածքային բուժքրոջ հաշվետվությունը՝ աշակերտների առողջական վիճակի և բուժական միջոցառումների իրականացման արդյունքների մասին: | Սեպտեմբեր, մայիս | Բուժքույր |
| թ/ | Բժշկի կամ բուժքրոջ միջոցով անցկացնել զրույց օրվա ռեժիմի, անձնական հիգիենայի մասին: | Ուստարվա ընթացքում | Բուժքույր |
| 16 ա/ | ***<u>ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ</u>*** Անցկացնել «Քաղաքացիական պաշտպանության օրը դպրոցում» միջոցառումը | Մարտ | Տնօրեն |
| 17 ա/ | Բարձրացնել աշխատանքային ուսուցման, աշակերտների մասնագիտական կողմնորոշման ուղղությամբ տարվող աշխատանքների որակը: | Ուստարվա ընթացքում | Տօրէն, ուսուցիչներ |
| բ/ | Դպրոցամերձ ծառերի խնամքի աշխատանքները կատարել աշակերտների միջոցով, սեր արթնացնել դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: | Ուստարվա ընթացքում | Ուսուցիչներ, աշակերտական խորհուրդ |
| գ/ | Աշակերտների ուժերով կազմակերպել դպրոցում աճեցվող ծաղիկների խնամքը: Հոգ տանել, որպեսզի ծաղիկներով ու կանաչ բույսերով կահավորվեն կաբինետները, միջանցքներն ու սրահները: | Ուստարվա ընթացքում | ուսուցիչներ |
| 18 ա/ | Օգնել գրադարանավարին կազմելու և հաստատման ներկայացնելու տարեկան աշխատանքային պլան | Օգոստոս | Տնօրեն |
| բ/ | Դպրոցի հնարավորություններից ելնելով՝ հարստացնել գրադարանային ֆոնդը: Թարմացնել գրադարանային ֆոնդում եղած դասագրքերն ու գրականությունը: | Ուստարվա ընթացքում | Տնօրեն, գրադարանավար |
| գ/ | Կազմակերպել միջոցառումներ նշանավոր և հիշարժան տարելիցների վերաբերյալ | Ուստարվա ընթացքում | խմբակավարներ |
| դ/ | Ստեղծել թեմատիկ քարտարաններ, ղեկավարել կրտսեր դպրոցի ընթերցանությունը: | Ուստարվա ընթացքում | Գրադարանավար, |
| ե/ | Դասագրքերով ապահովել աշակերտներին, մշակել համապատասխան փաստաթղթեր: | Սեպտեմբեր | Տնօրեն, Գրադարանավար |